



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԿԼԵՆՏԵՅԼԻ Ս. ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ ԵՒ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՅ ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆԶԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆՑ ՏԱՐԵՇՐՉԱՆԸ ԵՉՐԱՓՎԱԿՈՒԵՑԱՆ ՀԱՄԱՏԱՑԵԱԼՆԵՐՈՒ ՀՈՇ ԲԱԶՄՈՒԹԵԱՄԲ

Ազգային Առաջնորդարանիս Զրիստոնեական Դաստիարակութեան ախատանքներուն մաս կը կազմեն Ս. Գրոց սերտողութիւնները, որոնք կանոնաւորաբար եւ աշխուժօրէն տեղի կ'ունենան Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ, տնօրինութեամբ եւ հովանաւորութեամբ Թեմիս Առաջնորդ՝ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, առաջնորդութեամբ՝ Զրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքի զոյգ վարիչ Հայր Սուրբերուն, եկեղեցիներու հոգեւոր հովիւներուն, Հայաստանեայց Առաքելական եկեղեցասիրաց եղբայրակցութեան անդամներուն եւ Գրիգոր եղբայր Մարդկանին:

Երեքշաբթի, 30 Յունիս 2009-ի երեկոյեան, Կլենտլի Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, կատարուեցաւ Երեքշաբթի երեկոյեան հոգեւոր խորհրդածութիւններու տարեշրջանին եզրափակումը: Նախաձեռնութեամբ Կլենտլի Ս. Աստուածածին եկեղեցոյ հոգեւոր հովիւներուն ու Հոգաբարձութեան, եւ կազմակերպութեամբ Թեմիս Զրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքին, անցնող տարեշրջանին հոգեւոր խորհրդածութիւններ եւ Աստուածաշունչի սերտողութիւններ տեղի ունեցան վերոյիշեալ եկեղեցոյ մէջ, ամեն Երեքշաբթի երեկոններուն:

Ամբողջ տարեշրջանին, աւելի քան 700 անձեր մասնակցեցան սերտողութեանց, ուսումնասիրելով Նոր Կտակարանի Առաքելական Նամակներէն՝ Յակոբոս եւ Յուդա Տեառնեղբայրներուն եւ Պետրոս Առաքելի Ընդհանրական երկու Նամակները: Սերտողութիւնները վարեց Զրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներէն Հոգ. Տ. Պարթեւ Կրդ. Կիլիմեան:

Իսկ Չորեքշաբթի, 1 Յուլիսի երեկոյեան, Փասատիսայի Ս. Սարգիս եկեղեցոյ մէջ, եզրափակուեցաւ Չորեքշաբթի օրերու Ս. Գրային Սերտողութեանց երեկոնները, որոնք եւս կը վայելէին Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւնը, եւ եկեղեցոյ հոգեւոր հովիւին ու Հոգաբարձութեան աջակցութիւնը: Ամբողջ տարեշրջանին, առաւել քան 150

անձեր մասնակցեցան հոգեւոր սերտողութեան, սերտելով Յովհաննու Աւետարանը: Սերտողութիւնները վարեց Հայր Պարթեւ Վրդ. Կիւլիմեանը:

Տարեշրջանի եզրափակիչ երկու սերտողութիւններու աւարտին ներկայ եղաւ Առաջնորդ Սրբազան Հայրը: Տէրունական Աղօթքէն ետք, փառաբանական սաղմոսներ ընթերցուեցան եւ գոհաբանական երգեր ու շարականներ երգուեցան: Հայր Սուրբը ամփոփ գիծերու մէջ ներկայացուց անցնող տարեշրջանի սերտողութեանց պատկերը, ապա յանուն ներկայ հաւատացեալներուն Առաջնորդ Սրբազան Հօր առողջութիւն, արեւշատութիւն եւ բարի առաքելութիւն մաղթեց ու հրաւիրեց, որպէսզի Սրբազանը իր քաջալերանքի խօսքը փոխանցէ հաւատացեալներուն եւ օրհնէ զանոնք:

Առաջնորդ Սրբազանը նախ բարձր գնահատեց սերտողութեանց բոլոր մասնակիցները, Հայ Եկեղեցւոյ հանդէպ իրենց ունեցած սիրոյն, հաւատքին ու կապուածութեան համար, կոչ ուղղելով բոլորին, որ Աստուծոյ խօսքը՝ որ սերտեցին, իրենց առօրեայ կեանքին մէջ գործո՛վ արժեւորեն, որպէսզի իրենց խօսքն ու կեանքը համաձայն ընթանան, այդպիսով վայելելու՝ Տիրոջ ողորմութիւնը, սերն ու ներկայութիւնը: Սրբազանը գնահատեց նաեւ եկեղեցիներու հոգեւոր հովիւները եւ Հոգաբարձական կազմերը՝ իրենց անվերապահ աջակցութեան համար, եւ յատկապէս Հայր Պարթեւը՝ սերտողութիւնները մեր հայրերու հաւատքով փոխանցելուն համար:

Իր խորհրդածութեանց մէջ Սրբազանը անդրադարձաւ քրիստոնեայ մարդուն հաւատքի զէնքերով զինուելու եւ աղօթական կեանքի նուիրուելու անհրաժեշտութեան, կոչ ուղղելով բոլորին, որ ընտանեկան կեանքը աղօթքի շղթաներով ամրապնդելու եւ զաւակները Աստուծոյ տունը առաջնորդելու:

Սերտողութեանց աւարտին, բոլոր ներկաները ծնրադիր աղօթեցին ու երգեցին «Տէ՛ր, ողորմեա՛»ն եւ ապա Տէրունական Աղօթքը: Սերտողութեանց աւարտներուն, եկեղեցիներու Տիկնանց Միութեանց կազմակերպութեամբ՝ տեղի ունեցան պատշաճ հիւրասիրութիւն: